

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի : Երեւ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. ԿԶ 13
Քու խօսքդ իմ ոտքերուս
ճրագ է : Սաղ. 38-39. 105

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ

Ճշմարտութիւնը պիտի գիտ-
նաք, ու ան ճշմարտութիւնը
ձեզ պիտի աշտուէ: Յովհ. Բ. 32
Ուրեմն Քրիստոսի կողմանէ
դեսպանութիւն կ'ընենք, . . .
կ'աշտուենք ձեզ ի Քրիստոսի
կողմանէ, հաշտուեցէք Աս-
տուծոյ հետ: Բ. Կորնթ. Ե. 20

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժանորդագին տարկ.— Ֆրանսա եւ Սուրիա 4, Պալքանեան երկիրներ 5 ֆր. ուրիշ երկիրներ 1,50 ռիւ.

Rédacteur H. N. Ghazarossian, 12, Rue des Dominicaines — Marseille (France)

ԹԻԻ 5

Ա. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1925

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՐՏՈՒԱԾ

Զարէն մի յաղթուիր, Հոովմ. ԺԲ. 21 :

Աշխարհի մէջ յաղթութիւն եւ պարտութիւն
բաւերուն նշանակութիւնը շատ քիչեր հասկցած
են : Մարդոց մեծամասնութիւնը տեսածէն դա-
տելով՝ մին յաղթական կը հռչակէ, միւսը
պարտուած. մինչդեռ յաճախ հակառակը ճշմա-
րիտ է :

Յաղթութիւնը ընդհանրապէս կրիայի ոտքե-
րով կը յառաջանայ, ստէպ զառիվեր, մինչդեռ
պարտութիւնը յաճախ յաշոյղութեան դափնինե-
րով հիւսուած՝ չի նշմարուիր. ուստի հարկ է վախ-
ճանին սպասել :

Պարտութիւն բնոր տխուր ազդեցութիւն ձգող
բառ մըն է. այս պատճառաւ, ո եւ է մարդ չպիտի
ուզէր պարտուած յորջորջուիլ, ու եժէ ամէն փո-
ղոցին մէջ քալող իր ճակատին վրայ կայէնի նման
պարտութեան նշան մը կրէր, կամ փողոցները ա-
մայի պիտի մնային, կամ թէ թերեւս մարդիկ քիչ
մը աւելի զգաստ պիտի ըլլային : Պարտեալ կամ
յաղթական վիճակը ներքին վիճակ մըն է, ան
չտեսնուիր :

Քրիստոսի ներկայացող երիտասարդ օրինա-
կանը որ բոլոր օրէնքը կատարած ինքզինքը յաղթու-
թեան դափնիներուն շատ մօտ կզգար, ունէր տա-
կաւին մղել իր մէկ ճակատամարտ ալ ու այդ վեր-
ջին ճակատամարտին մէջ դիտապաստ գետին
կ'իյնար, նոյնիսկ Տէրոջը համակրանքը վայելելով
հանդերձ :

Ահա, քաջ երիտասարդ մը, վայելուչ կերպա-
բանքով : քաղաքավար շարժումներով, մաքուր
հագուած, գլխէն մինչեւ ոտքը վայելուչ, արտաք-
նապէս կատարեալ, սակայն մօտեցիր իրեն, պիտի
գտնես Աքիլէս մը գարշապարէն զարնուած : —
Բարոյապէս պարտուած մը :

Ո՛հ, ի՞նչ հազարաւոր նետերով վիրաւորուած,
պարտուած անդամներ ունինք հայ ազգին մեծ
ընտանիքին մէջ, ոմանք գինեմոլութեան նետէն
զարնուած, ուրիշներ մոլութեանց ու կիրքերէ,
հարստութեան մարմաչէն, հպարտութենէ, փառա-
սիրութենէ վարակուած, գերուած, պարտուած
են. ուրիշներ պարագաներէն դրդուած, իրենց
վիճակին վրայ խորհելով, ուրիշներ վերջապէս
ժամանակի ոգիին հետեւելով, պարտութեան մատ-
նուած են : Կան ուրիշներ ալ որ աշխարհէ ակնկա-
լած բաներնին չընդունելով Աստուծոյ հետ քննո-
ւած են եւ չեն ուզեր անոր գոյութիւնը ճանչնալ :

Արգահատանքի արժանի են այս խեղճ պար-
տուածները :

Սակայն Աստուած պարտութեան համար
չստեղծեց մարդը : Յիսուս Քրիստոսով յաղթական
կեանքի ենք կոչուած ամէնքս ալ : Զարէն մի՛
յաղթուիր երբ կ'ըսէ, ըսել կ'ուզէ թէ բոլոր
պարտութեանց արմատը չարն է : Զարը քու ամե-
նամեծ թշնամիդ է. ամէն զգացում, թեւադրու-
թիւն որ չարէն, մարմինէն, եսէն կուգայ, քեզ պար-
տութեան կ'առաջնորդէ :

Զարէն մի՛ յաղթուիր. եհովա՛ն մեր յաղթու-
թիւնն է : Իւրաքանչիւր հայ Մովսէսի նման սեղան
մը թող շինէ Եհովանիսի անունով — Տէրը իմ
յորօշակս :

Ամէն ատեն. ի տեղ ի վիճակ,

Հիմունք սրտիս, մտքիս, մարմնոյս,

Միայն Յիսուս :



ՓՈԽԱՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ

Սիրելի Ս...

Երկար ատեն էի վեր չէի գրեր քեզ. ճիշդ է թէ ատեն մը... խնդիրը կար՝ բայց խոստովանիմ որ եթէ գրելու իսկ ըլլայի շատ պաղ նամակներ պիտի ըլլային անոնք : Վախճանէն սկսիմ : Չորս ամսուան հոգեկան տաժանելի չարչարանքներէ լիտոյ ընդունեցի վերջապէս Աստուածային լոյսը, Յիսուս Քրիստոսի անհուն սէրը եւ Սուրբ Հոգիին խաղաղութիւնը :

Կը խնդաս : Բայց ես չգրած գիտէի որ պիտի խնդաս :

Այն օրէն որ Աստուծոյ հոգին խօսեցաւ իմ մէջս՝ ես կորսնցուցի ամէն ինչ. սրտի եւ մտքի խաղաղութիւն, դասերէս եւ գիրքերէս ունեցած հաճոյքս, բարեկամներու հետ յարաբերութեան վայելքը եւ՝ ուրիշ շատ բաներու կարգին եւ ամենակարեւորը՝ քեզ հանդէպ ունեցած սէրս :

Սիրելի Ս..., եթէ իմ մտքին մէջ շատ թարմ չըլլար դեռ չորս-հինգ ամիս առաջուան Վահանը՝ ես քեզի այս մասին գրելը բացարձակապէս անօգուտ եւ ուեւորդ պիտի նկատէի : Աստուծոյ անսխալ շատ տարտամ, գրեթէ անասառածութեան հասնող գաղափար մ'ունէի. կ'անարգէի Անոր անունը, կը ծաղրէի, ըսելով որ եթէ գոյութիւն ունի ալ՝ ծերացած, խռոված է : Իսկ հիմա, Անոր լոյսը, Անոր սէրը միակ երջանկութիւնս եւ բերկրանքս է : Յիսուս Քրիստոս, կրօնի մասին խօսած ատենս՝ ծաղրանքի իմ ամենէն մեծ նիւթս էր : Իսկ հիմա, Անոր սէրը ինձ խենթեցնալու աստիճան բերկրանք կուտայ. ամենէն սէզ պարծանքս ան է որ կրնամ ըսել — « Յիսուս իմ բարեկամս է » : Սուրբ Հոգին ինձ համար Մարաշցի ծերուկ « րուհի » ներու խռոված ուղեղներուն ստեղծագործութիւնն էր : Իսկ հիմա, ոչ թէ միայն կ'ընդունիմ Անոր գոյութիւնը աշխարհի վրայ՝ այլ կը զգամ այն իմ մէջս, եւ որը իմ միակ մխիթարիչս է : Այլ չըսեմ՝ մեղք, մեղաւոր, դարձի գալ, նորէն ծնանիլ, փրկութիւն, սրբութիւն, գրախտի եւ դժոխքի խնդիր, եւն. եւն. որոնց վրայ կոկորդալիը խնդունքներով ծաղրանքէ յետոյ երբ գիշանէի անոնց շուրջ կարծիքս յայտնել՝ կ'ըսէի թէ քրիստոնեաները իրենց գլուխներէն հանած են զանոնք շինելու համար քրիստոնէական դիցաբանութիւնը՝ ճիշդ ինչպէս որ, կ'ըսէի՝ հին պատմութեան մէջ յոյն բանաստեղծները կը հնարէին յոյն դիցաբանութիւնը : Հիմա, այս բառերուն իւրաքանչիւրը մէյմէկ սիրելի թէեւ տխուր պատմութիւններ ունեցող իրականութիւններ են ինձ համար :

Սիրելի Ս... որոշ կրօնական շրջանակի մը ազդեցութեան տակ՝ հոսանքէն քշուելով ունեցած գաղափարներ չեն որ կը գրեմ քեզ : Երբ կ'ըսեմ թէ Աստուծոյ կը հաւատամ եւ Քրիստոսը կը սիրեմ՝ գիտեմ թէ Որո՛ւ կը հաւատամ եւ զՈ՞վ կը սիրեմ : Չորս ամսուան կեանքիս իւրաքանչիւր ժամերը լեցուն են հրաշք կոչուելիք փորձառութիւններով :

Ձեմ ուզեր աւելի երկար գրել. եթէ ես քեզ օր մը Քրիստոսի եկած տեսնել կը յուսամ, իմ նամակներու վրայ յոյս չունիմ, եթէ նոյնիսկ ես ըլլայի ամէնէն կարող գրագէտը. իմ միտքի եւ միտքի յոյսս՝ յարատեւ, հաստատ հաւատքով, եւ անկեղծ բաղձանքով ըրած եւ ընելիք աղօթքներս են առ Աստուած որ նա քու հոգիիդ խօսի, հոգ չէ թէ այդ շատ ուշ ըլլայ : Կը յիշեմ Սուրբ Օգոստինոսը, որուն մայրը 33 տարի յարատեւ աղօթեց մինչեւ որ իր տղան որ սրիկայութեան մէջ ամենէն ցոյի կեանք մը կ'անցընէր՝ Քրիստոսի եկաւ :

Կրկնեմ թէ չեմ զարմանար որ այս նամակիս առջեւ կամ ափի բերան պիտի մնաս եւ կամ կոկորդալիը խնդաս. չեմ զարմանար, որովհետեւ միշտ աչքիս առաջն ունիմ՝ չորս ամիս առաջուան ինքս՝ երբ ինձ կատարեալ բնական կուզար ըրածս. քրիստոնէութիւնը անցած մօտա մ'էր ինձ համար, իսկ քրիստոնեաները ծաղրուելէ ուրիշ ի՞նչ բանի կրնային ծառայել :

Ո՛հ, երանի թէ, երանի՝ թէ ամէն ծաղրող՝ ծաղրելու համար յաճախ ժամեր յատկացնելէ յետոյ մի քանի վայրկեաններ ալ յատկացնէր լուրջ քննութեան եւ խորհրդածութեան քրիստոնէութեան մասին, ունենալով անշուշտ, անկեղծ փափաք մը, պապակ մը, ճշմարտութիւնը գըտնելու :

Քիչ վերը ըսի թէ ատեն մը կորսնցուցի ուրիշ շատ մը բաներու կարգին՝ եւ քեզ հանդէպ ունեցած սէրս. բայց չըսի թէ վերստին ինձ ետ տրուեցան ամէնէն ալ, այն օրէն՝ որ ես սկսայ հնազանդիլ Աստուծոյ. եւ ետ տրուեցան իւրաքանչիւրը կրկնապատկուած եւ քառապատկուած : Ուրեմն պիտի գրես ինձի՝ գիտնալով թէ քեզ կը սիրեմ առաջուան մի քանի անգամը :

ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ

Մարտի, 1 Օգոստ. 1925



ՍԱՏՈՒ ՍԸՆՏԸՐ ՍԻՆԿՀ

(Շարունակութիւն 28րդ էջէն)

Ը.

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԻՆ ՏԱԿ

Սընտրելի երթալիք ճամբան որոշ կերպով գծուած էր իր առջեւ : Այս ճամբան զինքը հօրենական տունէն վերջնականապէս հեռացուցած էր : Այժմ կը մագլցէր նա այդ դժուարել զառիվերը, որ իր առջեւ տարածուող հսկայական՝ այսու ամենայնիւ բազմաբոյր Հիմալայայի ոլորտապտոյտ ճամբուն կը նմանէր : Այո՛, քարոտ էր նա, եւ յաճախ հարկ կ'ըլլար անցնիլ ձիւնի անապատներու վրայէն, որոնք հազարաւոր վտանգներու բոյնն էին, եւ սակայն միեւնոյն ատեն շատ մը կարելիութեանց դռները կը բանային իր առջեւ անմահ հոգիներու՝ մոլորեալ մարդկութեան ճշմարիտ ճամբան ցուցնելու :

Արդ, կ'արժէր այդ ճամբան ձեռք առնել. ու եթէ երբեմն շատ նեղ կուգար այն, զառիվեր ու ամայի, այսու ամենայնիւ պատանի հնդիկն ունէր ուղեցոյց մը որու բոլոր խոստումներուն բացարձակ վստահած էր :

Ահա՛, ես ձեզի հետ եմ մինչեւ աշտարհի վերջը :

Արդ, այդ փրկչին ծառայելու կերպն ի՞նչ ըլլալու էր : Յիսուս այդ եղանակն ալ ցուցուցած էր իր աշակերտաց. « Ձեզի հետ ճամբու համար բան չառնէք, ո՛չ զաւազան, եւ ո՛չ պարկ, ո՛չ հաց եւ ո՛չ ստակ, ո՛չ ալ կրկին հանդերձ ունենաք » . Ղուկ. Թ. 3 : Սընտրելի մտքին մէջ իր մօրը վերջին կտակն ալ անթառամ մ'նացած էր « Որդիս ուշ կամ վաղ պէտք է Սուրբ Սատու մը (ուխտաւոր) ըլլաս : Արդեօք այդ հեթանոս բայց ճշմարտութիւնը փնտռող մօրը եւ իր փրկչին ցոյց տուած գործելու եղանակը իրարու չէի՞ն համաձայնեք :

Սընտրելի, թէեւ հօրենական տունէ վոնտուած մը եւ առանց դասակարգի, դարձեալ իր ազգատոհմին եւ ցեղին իբր մէկ անդամը նկատեց ինքզինքը, նման Քրիստոսի, որ իր ազգին կապուած էր վասն զի իրեններուն եկաւ, թէեւ իրենները զինքը չընդունեցին :

Արդ, պատանիին հոգին իր վարդապետին կը վերաբերէր եւ սիրտը ազգին : Այդ ժողովուրդը սակայն դասակարգային օրինաց տակ ճնշուած էր անհատնում խորշերով լի բաւիղի մը մէջ բանտարկուածներու նման. մէկ դասակարգը միւսին չէր կրնար հասնիլ,

բանտին պատերը շատ հաստ էին. յարաբերութիւն միայն բանտի պատերու վրայ բարախելով կարելի էր : Միայն մէկ անձ կրնար այդ փակ դռներէն եւ խորշերէն անարգել մտնել ու ելլել. միայն մէկ հանդերձի — ուխտաւորի հանդերձի — առջեւ կրնային նոյնիսկ Ձէն ան աներու (հարէմ) դռները բացուիլ, վասն զի ուխտաւորներ առանց քահանայական դասակարգի վերաբերելու, իրենց կեանքը բարութեան նուիրած էին : Սընտրելի որոշեց Սատու (ուխտաւոր) մը ըլլալ :

Պատանին բնաւ լսած չէր թէ քրիստոնեայ մը դեղնորակ սատուի հանդերձը հազած ըլլար, ու թերեւս հալածուէր, սակայն նա կրկնակ հալածանքին ենթակայ ըլլալու պատրաստ էր :

Եթէ կար մի կարելիութիւն այդ բոլոր դասակարգներու հաւասարապէս Քրիստոսի աւետարանը յաջողութեամբ քարոզելու, այդ ալ Սատուի հանդերձին տակ պէտք էր ըլլար, ուստի Սատու հնդիկ մ'նաց հնդիկներուն համար :

1903 Հոկտ. 6ին, մկրտութենէն 33 օր վերջը. իր սակաւապետական ինչքը նուիրեց չ'ունեցողներու, հազաւ սատուի դեղնորակ հանդերձը եւ իջաւ ասպարէզ, առանց զաւազանի, առանց պարկի, առանց հացի ու դրամի : Արտաքնապէս մուրացիկ մըն էր, ներքին հարըստութեանց տեսակէտով՝ նա ամենմեծ թագաւորներէն եւ կայսրերէն աւելի հարուստ էր, Քրիստոսի լման հետեւող մը :

Իրաւ այս մեծ քայլը 16 տարեկան պատանիի մը համար տղայական յանդգնութիւն կ'երեւի, սակայն այդ՝ հօր համոզումով գոյացած էր : Ամուրի ու առանց արհեստի՝ Քրիստոսի բարի աւետիսը իր մեծ հայրենիքին Հնդկաստանի բերել. — Ահա իր նպատակը :

Թէ անցնէր նա Հիմալայայի ապառաժուտ սառնապատներէն, ուր իր վիրաւոր ոտքերու արիւնը սառին վրայ կարմիր հետքեր կը թողուր, թէ թափառէր նա Սէյլանի կիզիչ արեւին տակ, իր կորսուած հայրենակիցներու ետեւէն, հիւսիսի ու հարաւի այս երկիրներուն մէջ նա միեւնոյն հանդերձը կը կրէր եւ նոյն ուրախութեամբ կը յառաջանար : Իր ամբողջ հարըստութիւնն էր բուրդէ ծածկոց (ֆանէլա) մը՝ զինքը գիշերուան սառնամանիքէն պահպանելու, ու Աւետարան մը՝ իր մայրենի լեզուով (Ուրտու) գրուած : Եւ ի՞նչ սիրելի կուգար իրեն այս աղքատ հանդերձը, որ իրեն դիւրութիւն կուտար հասնելու ամէն դասակարգի, այնքան

սիրելի որ' նա կը բացագանչէր. «Այն օրուրնէ ի վեր որ ես Սատու եղայ, այս հանդերձը ինձ ընկերակից ընտրեցի, եւ որքան որ իմ կամքէս կախեալ ըլլայ չպիտի բաժնուիմ անկէ»:

Թ.

ԱՌԱՋԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս Յիսուս իր առաջին քայլերը դէպի իր մայրենի գիւղերն ու քաղաքները ուղղեց, նոյնպէս նաեւ Սընտըր Սինկի: Բայց ոտքով ճամբորդելու անվարժ պատանիին փափուկ առողջութիւնը խանգարուելու ենթակայ էր: Իր այս կոչման մէջ ի'նչքան դժուարութիւններ կային. պիտի կրնա՞ր արդեօք անոնց ամէնուն ալ յաղթել: Այո', ո՛րքան դառն էին այն փորձութիւնները երբեմն, երբ երկար ճամբորդութենէ մը յետոյ պարտասած, վիրաւոր ոտքերով նա գիւղ մը հասած՝ առանց իր հագուստին վրայ խորհելու՝ կը սկսէր քարոզել, եւ սակայն փոխան բարեկամական սիրալիր խօսքի մը, կամ գոնէ ձեռքի մեղմ սեղմումի մը, մարդիկ դժկամակօրէն քիչ մը չոր հաց ու թաս մը անմաքուր ջուր կ'երկնցնէին իրեն, անգիտակ թէ Սընտըր մեծահարուստ Հնդկի մը զաւակն է: Քիչ անգամ իրեն քնանալու տեղ կը տրուէր, անոր գիշերային հանգստատեղին ընդհանրապէս բացօթեայ տեղեր, ժայռերու տակ, կամ խոռոչներ ու քարայրներ էին:

Միշտ դէպի արեւելք ճամբորդելով նա վերջապէս հասաւ Աֆղանիստանի սահմանը եւ տեսնելով թէ միւս կողմը հեթանոսական մթութիւնը շատ աւելի խոր է քան իր հայրենիքը, որոշեց հոն մտնել:

Անխոնջ քայլերով՝ բարի լուրը քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ ճամբորդներու եւ բնակիչներու աւետելով նա վերջապէս հասաւ Ճալալապատ:

Հոն իբր լրտես քաղաքէն դուրս վոնտուեցաւ, նոյնիսկ քանի մը երիտասարդներ գիշերուան մութին զինքը խողխողել որոշեցին: Բայց բնիկ մը որ Սատուին մէջ միայն մաքուր եւ անբիծ սիրտ մը տեսած էր, գթալով անոր վրայ, զգուշացուց պատահելիքէն, այնպէս որ պատանին իրիկուն չեղած մօտակայ գիւղ մը ապաստան փնտռեց: Բայց կ'երեւի թէ այդ կասկածը իր մասին հոն ալ տարածուած էր, այնպէս որ հոն ո'չ եւ չ'ապաստան մը չգտաւ: Վերջապէս հեռուն ճամբուն եզերքը խարխուլ պանդոկ (խան) մը նշմարեց, ուր նա իր գիշերուան հանգիստը առնել որոշեց: Բայց այս տեղը մանր միջատներու, թունաւոր մոծկան-

րու եւ ասիական այլեւայլ հիւանդութեանց որը մը, մահ սպառնացող ամենահոգեկոթ վայր մըն էր, ուր մտնողը առողջ դուրս չէր գար:

Երբ յաջորդ առտու արթնցաւ ու պատրաստուեցաւ դուրս ելնել այդ վտանգաւոր հիւանդութեանց թխսարանէն, զինքը կը դիմաւորէին մի քանի անձնաւորութիւններ, բայց ո'չ թշնամական այլ բարեացակամ վերաբերումով եւ սիրալիր գոչելով. «Ո՛հ, դու, իսկապէս Ալլահի մէկ ընտրեալն ես. դու սոսկումի վայրը գացիր եւ հոն ո'չ սառեցար, ո'չ ալ հիւանդացար, այլ ողջ առողջ դուրս կուգաս»: Անոնք զինքը գիւղերնին առաջնորդեցին եւ խնդրեցին իրմէ ժամանակ մը հոն մնալ: Ամէն օր մեծ եռանդով Աւետարանը կը կարդար անոնց ու կը մեկնէր: Աֆղանները կարճ ժամանակուան մէջ կապուեցան անոր, սկսան սիրել պատանին, անոր լաւ ընդունելութիւն ցոյց տուին եւ միշտ աւելի ունկնդրել կը փափաքէին: Իր հրաժեշտի օրը շատ սրտաճմլիկ էր. Սատու ակամայ ստիպուած էր անոնց սէրը չկտրել եւ մատուցուած գլխու փաթիթոց մը ու նոր ծածկոց մը ընդունիլ:

Սընտըրի համար ալ այս գիւղացիք շատ սիրելի եղած էին, այնպէս որ նա միշտ համակրանքով կը խօսէր Ճալալապատի իր բարեկամներուն եւ հոն անցուցած շաբաթուան մասին:

Ամիսներ տեւող այս առաջին ճամբորդութենէն յետոյ նա Քօթկարի մէջ (Սիմլայի մօտ) դադար մը ըրաւ: Հոն՝ իր մկրտութենէն յետոյ տակաւին Բենճապ, Աֆղանիստան, Քաշմիր, Պէլուճիստան չգացած, կարճ ժամանակ մը քարոզչական գործունէութիւն ունեցած էր:


Այս տեղը իր կեդրոնական ու գլխաւոր կայարանն էր, ուսկից նա իր յարձակումները դէպի հարաւ դէպի հիւսիս (Թիպէթ) պիտի սկսէր: Վասն զի Քօթկար Հնդկաստանէն Թիպէթ առաջնորդող եւ խոր դաշտագետիններէն դէպի գառիվերը, դէպի Հիմալայայի ամենի լերկ բարձունքները տանող ճամբուն վրայ կը գտնուէր: Այս կողմերը միայն ստորին դասակարգի հնդիկները կը բնակէին, սակայն Սընտըրի համար հոս ալ նոյնքան ընդարձակ դաշտ կար աւետարանը քարոզելու որքան ուրիշ տեղեր:

Լոյսը պէտք էր տարուէր, ուր որ անկէր:

Յ. Ն. Ղ.

(Շարունակելի)

ՍԻԶ ՊԵՆԻՄ ՇԱՀԻՏԼԵՐԻՄ ՍԻՆԻՉ



Եսայ. ԽԳ. 10-12.

Ալլահն վարլըղընն էն պէլլի իսպաթլա-
րընտան պիրի՝ Իսրայէլ գավմը տըր: Եէհովանըն
Ալլահ օլտուղունըն, վէ Անտէն պաշգա հազիզի
Ալլահ օլմատըղընն էն գուվվէթլի իսպաթը՝ Իս-
րայէլ տիր: Իշթէ պիր գավմ՝ քի էն էսքի գէման-
լարտան պէրու եաշամըշ, պիր չօգ ֆէլաքէթ-
լէրտէն կէշմիշ, լաքին հէփսինտէ մուգաֆֆէր օլ-
մուշ տըր: Կէօրիւնմէզ պիր էլ՝ քէնտինի իհտա
էյլէմիշ, Մըսըրտան չըգարմըշ, չէօլլէրտէ գա-
յըրմըշ, գօմշու վէ տիւշմէն միլլէթլէրին էլինտէն
գուրթարմըշ, վէ գուվվէթլի պիր գավմ էյլէմիշ
տիր: Օ կէօրիւնմէզ էլի ինքեար էտէր իսէն, Իս-
րայէլին թարիխի անլաշըլմազ պիր մուամմա օ-
լուր: Իսրայէլ՝ Եէհովանըն վարլըղընա վէ գուվ-
վէթինէ շահիտ տիր:

Լաքին պունտան գիյատէսի վար. Իսրայէլ՝
Եէհովանըն սիյրէթ վէ էվսաֆը ախլազիյէսինէ
տախի շահիտ տիր: Իսրայէլ՝ հազիզաթըն գուվ-
վէթինէ, սալահա, տօղրուղա, էյիլիյէ, առա-
լէթէ վէ հազգանիյէթէ շահիտ տիր: Իշթէ սանա
պիր գավմ քի հազգ վէ հազիզաթա սատըզ գալտը
վէ եաշատը: Իսրայէլ գավմընտան չօգ գուվվէթլի
գավմլար, հաթթա քէնտիլէրի թալան վէ էսիր
էտէն Աշուր վէ Քիլտանիլէր մահվ ու նապէտիտ
օլտուլար, ֆազաթ Իսրայէլ եաշատը: Հազգսըզ-
լըզ վէ ախլազսըզլըզ պիր գավմը խարապ էտէր:
Սալահ վէ հազիզաթ պիր գավմը իհեա էտէր:
Չիւնքի Ալէմ ու ճիհանըն էսասը՝ հազգ վէ հա-
զիզաթ: Ատալէթ վէ սալահ Ալլահն տըր: Իշթէ
Իսրայէլ պունտա տախի շահիտ տիր:

Միլլէթիմիզին անվալը՝ Իսրայէլինքինէ չօգ
պէնգէր: Պու մէսէլէ հազգընտա տիւշիւնիւրքէն
թապիի սուրէթտէ պու սիւալ ֆիքրիմիզէ կէլիւր:
Աճէպա պիրիմ իշիւն տէ այնի շէյ տէնիլէպիլի՝
մի: Պիզ Ալլահն շահիտլէրի՝ մի իզ: Ալլահ պիրզ
տէյէպիլի՝ մի: «Սիզ պէնիմ շահիտլէրիմ սինիզ,
պէնիմ վարլըղըմըն շահիտլէրի, պէնիմ թապիաթ
վէ սիյրէթիմին շահիտլէրի սինիզ»: Պիր միլլէթ
իշիւն պունտան եիւքսէք պիր հալ օլամազ:

Շու մուհաճիր վէ սէֆիլ հալիմիզէ պագտըզ-
մըզտա, էօնիւմիւզտէ պու խուսուստա պէօյիւք
պիր ֆուրսաթ աշըլըր: Դարիպ մէմլէքէթլէրտէ
իզ: Պիլմէտիլիմիզ գավմլար արասընտա օթու-
րույօրուզ: Պագաթ Ալլահն շահիտլէրի օլապի-
լիրիզ: Գօմշուլարմըզ պիրզ պագտըզլարընտա,
ֆիլվազը՝ Ալլահ վար տէյէպիլիլէր:

Պիզ շահիտլէր օլապիլիրիզ.

(ա). Սալահ վէ հազիզաթա, տօղրուղա վէ
հազգանիյէթէ: Շու գէմանլարտա տօղրուղա սէօյ-
լէյէն նէ գատար ազ տըր: Սանքի հէր քէս, ազ
չօգ եալան սէօյլէյօր: Պիզ տախիմա տօղրուղա
սէօյլէյէպիլիրիզ, վէ տախիմա տօղրուղա սէօյլէյէն
պիր միլլէթ հալիւնտէ նամ գագանապիլիրիզ: «Էր-
մէնի տախիմա տօղրուղա սէօյլէր» սէօզիւ քեաշքի
պիրիմ սըֆֆէթի մախսուսէմիզ օլսա:

(բ). Պիզ շահիտլէր օլապիլիրիզ, ախլազ փազ-
լիլինէ: Պու կիւն ախլազսըզլըզա, իշկիյէ, գու-
մարա, ատի էյլէնճէ մահալլէրինէ գօշանլար նէ
գատար չօգ տըր: Քեաշքի պիրզ, «Էրմէնի ախլազ-
սըզլըզ էթմէզ, իշկի իշմէզ, էնկիւն արգատաշ-
լըզտա պուլունմազ» շէօհրէթիլլէ մալիւմ օլսազ:
Միլլէթճէ պիրզ պունտան պէօյիւք նէ սէրվէթ
օլապիլիր:

(գ). Պիզ շահիտլէր օլապիլիրիզ, սուլհիլէր-
վէրլիյէ, հիւմէ, լէթաֆէթէ վէ մուհապպէթէ: Պու
կիւն տիւնեատա նէ գատար միւնազաա վար, ա-
տէմլէր պիրի պիրիլլէ նէ գատար զավղա եափար-
լար: Քեաշքի պիրզ «սուլհ էտիճիլէր» իսմիլլէ մա-
րուֆ օլսազ: Քեաշքի տախիմա հալիւմ, լաթիֆ վէ
աֆվ էտիճի օլմաղը էօյրէնսէք: Քեաշքի գօմշու-
լարմըզ պիրզ պէօյլէ պիլսէլէր: Քեաշքի տօսթ
վէ տիւշմէնլէրիմիզ պիրզ պէօյլէ թանըսալար:

Հէր շէյիմիզիզ գայ էթտիք, լաքին ինանալըմ
քի Ալլահ վար վէ Օնուն էլի պիրզ իհտա էթմէք-
տէ տիր, վէ պիր Օնուն շահիտլէրի օլապիլիրիզ:
Պագէն՝ շահիտ օլմազ, շէհիտ օլմագաան կիւն
տիր: Չալըշալըմ քի էօմրիւմիւզլէ Ալլահա շէ-
հատէթ էտէլիւմ: Կէնճ տօսթում, պունտա չալըշ:

Աթինա, 25 Յունիս 1925

Բրօֆ. ԼՈՒԹՖԻ ԼԵՒՈՆԵԱՆ

ԲՈՒՄԻԱՏԱ ԻՆԹԻՊԱՀԸ ԲՈՒՀԱՆԻ

Սօս պիր գաշ սէնէտէն պէրրու Բուսիա ինթի-
պահը բուհանի իշիւնտէն կէշմէքտէ տիր: Պիր գէ-
ման գուլմէթտէ եաշայան պու գավմը ախլազ-
սըզլըզ վէ ճէհալէթ իշիւնտէ կէօրիւր իտին, պու
կիւն պու եօրուլմուշ, եարալանմըշ վէ խա-
րապ օլմուշ օլան տիյարըն իւզէրիւնտէն Ալլահն
տիրի Քէլամընըն վասֆա կէլմէզ ազիմ պիր սէյլի
ճէրյան էթմէքտէ տիր: Պու կիւն պու տիյարըն

պուզ կրպի սօղոզ օլան շիմալընտան, սըճազ ճէ-
նուպունա գատար վէ շարզընտան սէքէնէսի չօզ
սըզ օլան դարպընա գատար մէմէքէթին շէհիր
վէ քէօյլէրինտէ, միւմինլէր քիւմէսի պիր շէպէքէ
թէշքիւ էթմէքտէ տիր: Պինլէրճէ քիմսէլէր Քրիս-
տոսա կէլմիշ վէ քէնտի էօմրլէրինի Անա վազֆ
էթմիշ տիրլէր: Պու զըսա միւտտէթտէ Ինճիլին
միւստէսի տէյիլ սալթ Բուս գազմընա միւնհասըր
գալմըշ, իլլա օլ տիյարտա եաշայան չօզ էճնէպի
գազմարա տախի/ եէթիշմիշ տիր: Սամօյիտլէր,
Սուրյանլար, Օսթյաքլար, Չուվաշլար, Չէրմիսլէր,
Թաթարլար, Կիւրճիլլէր, Եէհուտիլլէր վէ տահա
չօզ պաշգա գազմար Ինճիլի քէնտի անա լիսան-
լարընտա իշիտիյօրլար վէ պու ճիւմէ գազմար
արասընտա քրիսթիյանլըղը գապուլ էտիպ վաֆ-
թիզ օլունմուշ քիմսէլէրտէն միւլթէշէքթիլ ճէմի-
յէթլէր վար տըր: Պու զէմանըն պիր չօզ կիւճ-
լիւք վէ թարիֆ օլունմազ էլէմլէրինէ րադմէն,
պու գազմ արասընտա րուհանի ինթիպահ իլէրի
կիթմէքտէ տիր:

Բուսիա րուհանի էօլիւմուլգուսունտան ույան-
մագտա, կիւնահըն վէ ճէհալէթին պէնտլէրի զը-
րըմագտա, միլիօնլարճա ատէմլէրին գալլլէրինէ
էքիլէն Ալլահըն Քէլամընըն թօխումը պիրագտան
եիւզ գաթ մէյվէ հուսուլէ կէթիրէճէք տիր: Բուս-
լար արասընտա օլան թէպշիրի պէշարէթ գաթէն
պու կիւն եէթկին մէյվլէր հասըլ էտիյօր: Էօյլէ
մահալլար վար տըր քի անլէրին սայքի պիւթիւն
սէքէնէսի միւմինլէրտէն իպարէթ տիր վէ նիչէ
շէհիր վէ քէօյլէրտէ միւմինլէր ճէմիյէթլէրի վար
տըր: Օլ պէօյիւք վազըլար քիւմէսիտէն ան-
ճազ պիր գաշ նիւմունէլէր զիքը էթմէք իսթէրիմ
քի անլէր պիզէ օլ րուհանի պէրէքէթլէրին պէր-
րազ պիր թասթիրինի կէօսթէրէպիլիլլէր:

Էփէյի վազթլարտան պէրրու ինթիպահլար
վուզու պուլմագտա օլան ճէնուպի Փօտէլիայը զի-
յարէթիմ էսնասընտա պէօյիւք պիր քէօյէ չազ-
րըլտըմ, եօլտա պանա նազլ էթտիլէր քի սօն սյ-
լարտա օրատա եիւզտէն զիյատէ միւմինլէր մէյ-
տանա կէլմիշ տիր: Օրա եէթիշտիյիմտէ պիրա-
տէրլէր օրտա վուզու պուլան ինթիպահըն թարի-
լինի նազլ էթտիլլէր: Օլ քէօյտէ պիր այաղընը
հարպտա դայ էթմիշ օլան ֆազիր պիր ատէմ եա-
շար իտի, մէրզում պազէն ազշամլարը էվլէրտէ
քէօյլիլլէրէ Ինճիլտէն օգուր վէ անլէր իլէ թէվպէ
հազընտա գօնուշուր իտի: Պու շէյ չօզլարտա
մէրազ ույանտըրտը վէ նիլէլէր քէնտիին տին-
լէմէք իւզրէ չօզ տէֆա էվլէրինէ տազլէթ էթտի-
լէր, տինլէյէնլէրին տայրէսի կիթտիքճէ պէօ-
յիլտիւ: Քէօյիւն փափասը պունու իշիթտիքտէ
կիրակի խըզմէթլէրինտէ պու եանլըշ թալիմէ
գաըշը սէօյլէմէյէ պաշլատը: Լաքին ֆայտէսի օլ-
մատըգտան մատա անլէր Ինճիլի տահա զիյատէ
օգուսագա սէվզ օլունտուլար: Պու պիրատէրէ վէ
անը տինլէյէնլէրէ նասիհաթ էթմէք իւզրէ քէնտի

քիլիսասընըն պիր իլթիյարընը կէօնտէրտի: Պու
քիմսէ պիր գաշ տէֆա անըն իլէ կէօրիւշտիւքտէն
սօնրա օ տա իմանա կէլտի: Փափաս պիր ազ
սօնրա այնի մագտա իլէ սարկաւագընը եօլլատը
իսէ տէ, պու տա թութուլտու: Պունուն իւզէրինէ
քիլիսասընտա գուայր (երզնախումը) միւտիլինի
եօլլատը իսէ տէ, նէթիճէսի շու օլտու քի մէրզում
վէ գուայր ազալարընըն նըսթը տախի թէվպէ էթ-
տիլլէր:

Պու վազաւար վասըթասըլլա պիւթիւն քէօյ
հէյէճանա կէլտի վէ չօք քիմսէլէր Ինճիլի շախ-
սէն օգուսագը գարար էթտիլլէր: Օլ կիւնլէրտէ
եիւզտէն զիյատէ քիմսէլէր թէվպէ էթտիլլէր: Պու
կիւն պու քէօյտէ 200 քիշիտէն իպարէթ պիր ճէ-
միյէթ մէվճուս օլուպ քէնտիլէրէ մախսուս իպա-
տէթ մահալլարը տա վար տըր:

Եագընտաքի քէօյտէն պիր քէօյիւ ազրի-
պասը իլէ կէօրիւշմէք իւզրէ պու քէօյէ կէլտի վէ
պու վազըլար հազընտա իշիթտի, էվլին տէօն-
տիւյիւնտէ Ինճիլի տիգգաթլա օգուսագա պաշ-
լատը. գօմշուլարըն տախի մէրազը ույանըպ,
տինլէմէք իւզրէ ազշամլարը տէվսամի եանընա
կիթտիլլէր: Տինլէյէնլէրին սայըսը կիթտիքճէ չօ-
ղալտը, չօղար թէվպէ էթտի վէ շիմտի պու
քէօյտէ 100 գատար քիմսէլէրտէն իպարէթ պիր
ճէմիյէթ վար տըր: Պիւթիւն օլ էյալէթտէ գը-
սա պիր միւտտէթ գարֆընտա պիւնտէն զիյատէ
քիմսէլէր թէվպէ էթմիշ տիրլէր:

Պիր պաշգա մահալ հազընտա նազլ էտէյիմ
քի օրատան թէստտիլլէն կէլտիմ: Օրտաքի միւ-
մինլէրէ նէ եօլտա թէվպէ էթմիշ իտիքլէրինի սի-
վալ էթտիլլիմտէ, շէօյլէ տէտիլլէր:

Նարիճտէն պիր հէմշիլէ պուրայա կէլտի,
Ինճիլի օգուսագա պաշլատը վէ պազէն տէ գօմ-
շուլարըլլա րուհանի մատտէլէր հազընտա գօ-
նուշուր իտի: Տինլէյէնլէր չօղալտըլար վէ չօղար
թէվպէ էթտիլլէր: Թէվպէ էտէնլէր արասընտա օլ
մահալըն էն պէլլի հիւքիւմէթ մէմուրլարընտան
պիրի վէ պիր գաշ տա գօմիւնիսթլէր վար իտի:
Փէք զըսա պիր վազթտա օրատա 50 միւմինլէր
մէյտանա կէլտի: Պունա պէնգէր տահա պիր չօզ
վազաւար վար տըր քի անլէր Բուսիտա Ին-
ճիլին զալէպէսինի իսպաթ էթմէքտէ տիրլէր:

Բապպ պու րուհանի ինթիպահտա տէյիլ
սալթ վաիզլէրի, իլլա ասի էրքէքլէրի, գատըն-
լարը վէ չօնուզլարը տախի գուլլանըյօր, նիչէ
մահալլարտա սալթ Ինճիլին օգուսագա իլէ նի-
չէլէր թէվպէ էտիյօրլար:

«Յիր Ալլէ» տէն Թէրմիլէ



ՇԱՐԱԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Օգոստոս 16_22

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիր. Մենք ամէնքս Աստուածային ցեղէ ենք, Գործ. ԺԷ. 24_31 :
 Բ. շր. Սակայն որդիական իրաւունքը կորսնցուցած ենք, Ղուկ. ԺԵ. 11_24 :
 Գ. շր. Ու միայն Քրիստոսի միջոցաւ կրնանք վերստանալ, Յովհ. Ա. 6_14 :
 Դ. շր. Հաւատքով, Գաղ. Գ. 24_29 :
 Ե. շր. Սուրբ հոգւոյն վկայութիւնով, Հռովմ. Ը. 12_29 :
 Ուր. Անոր նման ըլլալ, Մատթ. Ե. 43_48 :
 Շր. Աստուծոյ որդիներ եւ ժառանգներ, Գաղ. Գ. 1_7 :
 Հարցում. Ո՞ր վերաւանք ունի ինքզինքը Աստուծոյ որդի կոչելու : Աստուծոյ որդի ըլլալը ի՞նչ առանձնաշոր հոմաներ կը պարփակէ իր մէջ : Աստուծոյ որդի մը պարտականութիւնն ի՞նչ է :

Օգոստոս 23_29

ՉԱՐ ՄԱՐԳԻՒԿ

Կիր. Կայէն Ա. Յովհ. Գ. 11_18 :
 Բ. շր. Սողոմի մարդիկը, Մանգ. ԺԳ. 8_13 :
 Գ. շր. Չար ժողովուրդը, Ելից ԼԲ. 15_24 :
 Դ. շր. Յեղիի որդիքը, Ա. Թագ. Բ. 11_17 :
 Ե. շր. Սաւուդ, Ա. Թագ. ԺԸ. 6_12 :
 Ուր. Չարութեան վրայ խնդացողները, Առակ Բ. 9_15 :
 Շր. Չարին բարի եւ բարիին չար ըսողները, Եսայ : Խ. 20_25 :
 Հարցում. Չարութիւնը ի՞նչ ձեւերով կը յայտնէ ինքզինքը, կա՞յ չարութիւն մը որու արմատը տակաւին գոյութիւն չունի մեր սրտերուն մէջ : Այս գիտակցութիւնը զմեզ ի՞նչ բանի առաջնորդելու է :

Օգոստոս 30_Սեպտեմբեր 5

Ո՞Ր Է ՉԱՐ

Կիր. Մենք բոլորս, Ղուկ. ԺԱ. 9_13 :
 Բ. շր. Աշխարհ, Գաղ. Ա. 1_5 :
 Գ. շր. Երկնաւորներու մէջ եղող չար ոգիները, Եփես. Ծ. 10_17 :
 Դ. շր. Չարը, Մատթ. ԺԳ. 18_23 :
 Ե. շր. Սրտին չար խորհուրդները, Ղուկ. Զ. 39_45 :
 Ուր. Բամբաստողները, Ա. Պետր. Գ. 8_17 :
 Շր. Աստուծոյ թշնամիները, Կող. Ա. 19_23 :
 Հարցում. Ի՞նչ կը նշանակէ իր կ'ըսենք թէ չար ենք : Չարութիւնը ու՞սկից կուգայ մեր մէջ : Ի՞նչ է չարութեան իսկական էութիւնը :

Սեպտեմբեր 6_13

ՇԻՄՆԱԿԱՆ ԴԱՐՁ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Կիր. Պատու հեծանաւ մէջ, Գործ. ԺԳ. 42_52 :
 Բ. շր. Հիմնական դարձ մը, Գործ. Խ. 1_22 :
 Գ. շր. Քրիստոսի համար քաջարար աշխատիլ, Գործ. Խ. 23_31 :

Դ. շր. Բաց դուռ մը, Գործ. ԺԳ. 22_28 :

Ե. շր. Հեծանաւայ ծառայելու համար որոշուած, Հռովմ. ԺԳ. 14_24 :

Ուր. Մառայութեան համար ձեռնադրուած, Գործ. ԺԳ. 1_5 :

Շր. Ցաջող գործունէութիւն, Գործ. ԺԳ. 13_41 :

Հարցում. Ինչո՞ւ համար հիմնական դարձ մը մարդս միտնումար կ'ընէ : Մեր միտնումարական պարտականութիւնը ըստ Գործ. Ա. 8ի : Չանագան երկիրներ ցրուած Հայ ազգին մէջ կատարուած հոգեւոր գործունէութեան մասին տեղեկութիւններ ունի՞ս եւ կը հետաքրքրուի՞ս անելին գիտնալու :

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Անգամ մը Ռուպինշեան մեծ դաշնակահարին հարցուեցաւ, թէ իրեն նման գեղարուեստի կատարելութեան գազանակէտին հասած մէկը արդեօք պէտք կ'զգա՞ր երբեմն դաշնակի վրայ վարժութիւններ ընելու :

« Եթէ միայն մէկ օր չվարժուիմ, անմիջապէս ես կ'զգամ թէ մատերս իրենց ճկունութենէն բան մը կորսնցուցած են, եթէ 2 օր զանց ընէի վարժութիւններս, բարեկամներս պիտի հասկնային թէ Ռուպինշեանը չեմ, իսկ եթէ 3 օր առանց վարժութեան անցնէի, ամբողջ ժողովուրդը պիտի հասկնար », պատասխանեց Ռուպինշեան :

Նոյնը ճշմարիտ է նաեւ հոգեւոր կեանքի մէջ, մէկ օր առանց ճշմարիտ աղօթքի կեանքի եւ Աստուծոյ հետ մտերիմ յարաբերութեան, մարդս մէկ քայլ ետ կը զարնէ : Մարդիկ կան որ, ժամանակ ու մտքի հանդարտութիւն չունին ասոր համար. սակայն վարժութիւն : Ուր կամք կայ՝ հոն ճամբայ կայ :

Ա՛խ, քանի՞նե՛ր կան որ ատեն մը հաւատքով եւ ուրախութեամբ իրենց ճամբան կ'երթային, սակայն հիմա լռութեան դատաւարտուած են այդ ժամին զանցառութեան պատճառաւ : Մեզի ծանօթ է մէկը որ ատենօք դարձի եկած ըլլալով՝ արցունքով հայհոյիլ եւ գինեմով մարդու մը դարձին պատճառ եղաւ, սակայն տարիներ չետոյ իր միջոցաւ դարձի եկողը որ այժմ կենդանի քրիստոնեայ մըն է, արցունքով կը ինդրէ իրմէ ինկած տեղէն վերստին ելլելու, սակայն մինչեւ հիմա կարելի եղած չէ : Ցաւալի վիճակ : Պօղոս մասնաւոր հոգածութեամբ կ'ըսէ Տիմոթէոսի՝ « Ք ու ա ն ձ դ ա ս տ ու ա ծ պ ա շ տ ու թ ե ա ն վ ա Ր ժ ե ց ու ր : » Ա. Տիմ. Գ. 7 :

Շարժական խորհրդածութեան այս նիւթերը աստուածապաշտութեան վարժուելու թող օգնեն քեզ :

Յ. Ն. Ղ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հայաստանէն — Անցեալ թուով տեղեկութիւն տուինք թէ հայասէր Տօքթ. Նանսէն Հայաստան անցաւ գաղթականներու փոխադրութեան խնդրով քննութիւններ կատարելու համար : Մեզ ի եկած նամակներ կ'ապացուցանեն թէ ի'նչ անձկանօք կ'ապասեն մեր գաղթականները իրենց անուանով կոչուող երկիրը հասնելով, վերջնականապէս հոն հաստատուիլ եւ վերջ տալ իրենց գնչուական գաղթական անտանելի կեանքին : Սա գնահատելի պարագայ մըն է, նաեւ յոստոյնի մեզ համար, մինչդեռ մեկ կողմէ լուծուելու մղձաւանջին տակ կը կրինք, միւս կողմէ կը տեսնենք որ հայրենիքի սէրը ինչպէս զերմար մարիլ վաւ սրտերու մէջ :

Սակայն թող իւրաքանչիւր անձնաւորութիւն գիտակից ըլլայ սա մեկ պարագային թէ, Նանսէն ամենակարող մէկը չէ : Թէ հարկիւր հազարներով գաղթականներ պզտիկ Հայաստանի մը մէջ տեղափոխելու գործն ալ շատ մը դժուարութեանց կ'ապուած է : Բնակարանի, դրամի ու մշակելի հողի պակասը ահարկու արգելքներ են այս Երազարին շուտափոյթ գործադրութեան :

Արդ ի'նչ ըրաւ Նանսէն :

Անկա հողերը քննեց : Հայաստանի կառավարութիւնը ամէն դիւրութիւն ընծայեց իրեն այդ քննութիւնները շուտով ի կատար հանելու : Գաղթականը Հայաստան երթալուն պէս հողի պէտք ունի՝ իր բազուկները անմիջապէս գործի լծելու համար, ուստի այդ հողը պէտք է պատրաստուի, եթէ ոչ Հայաստանի մէջ ալ գաղթականը գաղթական պիտի մնայ :

Տօքթ. Նանսէն կարգ մը յայտարարութիւններ ըրաւ, որոնցմէ հետեւեալները կը քաղենք .

« Հայաստանի կառավարութիւնը բարեացակամ վերաբերում ցոյց տուաւ գործնական որոշ համաձայնութեան գալով մեզի հետ : Ասոր շնորհիւ, յաջողեցանք դրական եզրակացութեան գալ այն հողերու մասին, որոնք կը գտնուին Երեւանի հարաւային արեւելեան եւ հիւսիսային արեւմտեան կողմը : Առաջինը 19000 տեւիադին տարածութիւն ունի, երկրորդը՝ 14000, ընդամենը՝ 33000 տեւիադին :

Այս հողերուն վրայ կարելի է տեղաւորել 10-15000 հողագործ գաղթական : Պարզ է որ այս անջրդի հողերը ոռոգուելու վիճակին հասնելէն վերջ, իրաւացի չէ ամբողջովին գաղթականներու յատկացնել, քանի որ այդ շրջանի բնիկ գիւղացիութիւնն ալ քիչ հող ունի :

« Եւրոպա վերադառնալէ յետոյ, ես անմիջապէս պիտի աշխատիմ նիւթական միջոցներ գտնել՝ այդ հողերը ոռոգելու համար : Յուսով եմ որ դարձեալ Հայաստան կու գամ » :

Արդ եթէ այս նախապատրաստական գործերը ի կատար հանուին, անկէ յետոյ կարելի պիտի ըլլայ 10-15000 գաղթականներու փոխադրութիւնը : Պ. Լուկաշին ապահովցուցած է Տօքթ. Նանսէնը որ՝ Անդրկովկասի կառավարութիւնը ամէն աշակցութիւն ցոյց պիտի տայ, եւ Հայաստան զրկուած գաղթականները փոխադրական, հարկային եւ կարգ մը ուրիշ արտօնութիւններ պիտի ստանան :

Երեւանի ողորդումը. — Երեւանի ողորդումն ըստ վնասները հաշուող Մասնախումբը կը տեղեկագրէ թէ 1.334.530 ռուպլիի պէտք մը կայ՝ եղած վնասները դարմանելու համար :

Ուրախ ենք ըսելու որ ամէն կողմէ օգնութեան ձեռքեր կ'երկարին հոն . Թիֆլիսի քաղաքապետութիւնը 10000 ռուպլիի դրկած է . նոյնպէս Մոսկուայի կարմիր խաչի վարչութիւնը՝ 3000 ռուպլի : Արտասահմանի մէջ ալ ամէն կողմ հանգանակութեան սկսուած է : Ինչպէս մեր նախորդ թուով ծանուցինք, աղէտեալ մեր եղբայրներուն ի նպաստ զրկուած գումարները, պատկանեալ մարմիններու յանձնել կը ստանանք : Այսպիսի պարագաներու մէջ մեր անցեալը մտաբերելով՝ մեր քաղնները քիչ մը լայն բանալք : Ուրախ ենք ըսելու որ երկու անձերէ տասնական ֆրանքի նուէրներ հասած են մեզ : Նուիրատուներու ցանկը ուրիշ առթիւ պիտի հրատարակուի :

Մարտի 23 — Ամսոյս 23 ին տեղի պիտի ունենայ հայկական շքեղ դաշտահանդէս մը, վերին հովանաւորութեամբ Եւրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատուիրակ Դեր. Տ. Գրիգորիս Եպիսկ. Պալագեանի, կազմակերպուած Հայ Ազգ. Միութեան կողմէ, ի նպաստ Ազգ. Վարժարանի :

Շնորհակալութիւն — Խմբագրութիւնս մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Ամերիկացի Miss Buchmillerի որ «Բանբեր»ի տպագրութեան ծախուց համար 500 ֆրանք նուիրած է :

Յարգ. Ֆրանսայէն եւ ուրիշ տեղերէ իրենց բաժնէ գնէն աւելի դրամ դրկող մեր բոլոր համակիրներու մասնաւոր շնորհակալութիւններ կը յայտնենք : Իրենց պզտիկ նուէրները մեզ մեծ քաջալերութիւն եղած են :

Ստացանք Մարաննա հոգեւոր կիսամետան (այժմ ամսաթերթ) հրատարակուած Հալէպի մէջ խմբագիր — արտօնատէր Տիար Ա. Գ. Սէֆէրեան : Տարեկան 1.25 տուար, բաժանորդագրուիլ ուզողները կամ մեզի թող դիմեն, կամ ուղղակի հասցէին, A- K. Séférian, B. P. 303 Alep (Syrie). Մարաննա նոյն պարունակութիւնով թէ՛ հայերէն եւ թէ՛ ֆրանսերէն զատ զատ կը հրատարակուի, գինը միեւնոյնն է :

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ — Մեր գործակալներէն եւ բաժանորդներէն յատկապէս պիտի խնդրէինք որ «Բանբեր»ի չգործածուած բացառիկ եւ Ա. Թիւրքը մեզի ընդօրոյթ եւ վերադարձնեն, շնորհակալ պիտի ըլլայինք նաեւ անոնցմէ որ այդ թիւերուն պէտք ջոննեալով մեզի կը տրամադրեն :

Մեր բաժանորդներէն անոնք որ տակաւին իրենց տարեկան բաժնէները դրկած չեն, թող հաճին դրկել, իսկ կէս տարուան բաժանորդները առնին թերթ ստանալու համար, բաժնէները այժմէն նորոգելու են :

Le Gérant : Pasteur Kaltenbach

Տպագր. Ա. ԵՐԼՑԵԱՆ
40, Բիւտէ Տօփնիքէն. Մարտի 23